

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԻ 1667 թ. ՆԱՄԱԿԸ ՊՈԼՍԱՀԱՅԵՐԻՆ

ՎԱՋԳԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Մոսկվայի հին ակտերի կենտրոնական պետական արխիվի 100 ֆոնդում պահպանվում է հայերեն մի նամակի ռուսերեն կրկնօրինակը, որի բնագիրն ուղարկված է եղել Կոստանդնուպոլիս՝ Ռուսաստանի անվանի դիվանագետ հայազգի Վասիլի Դաուդով Ալամարցյանի միջոցով, այնտեղի հայերին հանձնելու և իր լիազորությունները հաստատելու համար:

Նամակի հեղինակները այն 40 հայերն էին, որոնք 1666 թ. Պարսկաստանից ու շահի տիրապետության տակ գտնվող Անդրկովկասի քաղաքներից մեկնել էին Մոսկվա՝ ռուսական արքունիքի հետ բանակցություններ վարելու և առևտրական պայմանագիր կնքելու նպատակով: Մեկ տարուց ավելի տևած այդ բանակցություններն ավարտվեցին 1667 թ. մայիսի 31-ին կնքված հայ-ռուսական առևտրական նշանավոր պայմանագրով, որը հայտնի է որպես Նոր Զուղայի առևտրական ընկերության և Ռուսաստանի միջև կնքված պայմանագիր¹:

Նոր Զուղայի մեծահարուստ խոջաները հայտնի էին միջազգային առևտրի մեջ իրենց նշանակալի մասնակցությամբ և մեծ արտոնություններ էին ստացել պարսկական արքունիքից: Մետաքսի և արևելյան այլ ապրանքների գնման ու արտահանման մենաշնորհը տասնյակ տարիներ շարունակ պահելով իրենց ձեռքում, ջուղայեցիներն ապահովում էին սեփական գերակշռող դիրքը Հայկական ընկերությունում: Այդ պատճառով պատմագրության մեջ իշխող կարծիք էր դառել այն, թե Հայկական ընկերությունը միայն ջուղայական էր և միայն նրան էր շնորհված տարանցիկ ու արտոնյալ առևտրի իրավունքը:

Հետազոտելով 1667 թ. պայմանագրի հիման վրա ծավալված առևտրի վերաբերյալ պահպանված արխիվային փաստաթղթերը, նկատել ենք, որ Անդրկովկասի տարբեր քաղաքներից Ռուսաստան գնացող հայ վաճառականները դիմումներով մշտապես խնդրում էին ռուս արքունիքին՝ թույլատրել իրենց ապրանքները վաճառել և մաքս վճարել ռուս հայկական առևտրական պայմանագրի: Որպես օրենք հայերի այդ պահանջները բավարարում էին և՛ կենտրոնական, և՛ տեղական իշխանությունները: Փաստերը ցույց են տալիս, որ, այսպես կոչված, «Զուղայական կոմպանիային» տրված առևտրական արտոնություններն ըստ էության տարածվում էին բոլոր հայերի վրա: Ավելին, 1667 թ. կնքված և 1672 թ. վերանայված ու վերստին հաստատված առևտրական պայմանագիրն ունեւ որ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն, հանդիսանալով կարևոր միջոց՝ հայ-ռուսական կապերի ամրապնդման և Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության ակտիվացման համար: Մետաքսի արտահանությունը ավանդական ճանապարհից հանելու և Վոլգյան առևտրի հիմնական զարկերակը դարձնելու միջոցով Ռուսաստանը կկարողանար տնտեսական մեծ օգուտ ստանալ (և մեծ վնաս էր կրելու Թուրքիան), իսկ հայ վաճառականները կարողանալու էին իրենց առևտրական քարավանները վարել ավելի կարճ ու անվտանգ ճանապարհով՝ Ասարախանից մինչև Արխանգելսկ: Հայ վաճառականությանը տրված արտոնագիրն ու կնքված պայմանագիրն արտահայտում էին առանձնահատուկ այն

¹ Տե՛ս В. Восканян, Ново-торговый устав и договор с Армянской компанией 1667 г. (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1947, № 6):

² Վ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1948, № 1):

վերաբերմունքը, որ ռուսական արքունիքը ցուցաբերում էր Անդրկովկասի ժողովուրդներին՝ իր հնարավոր դաշնակիցների նկատմամբ, իհարկե, կայսրության տնտեսական, քաղաքական ու ռազմական նպատակներին համապատասխան:

Խնդրո առարկա նամակում ևս արտացոլում է գտել ռուսական արքունիքի այդ վերաբերմունքը: Ըստ այդ նամակի՝ Հայկական ընկերության 40 լիազոր ներկայացուցիչներ դիմում են Կոստանդնուպոլսի հայերին, նրանց կոչ անելով ամեն կերպ օգնել Թուրքիա մեկնող ռուսական դեսպանությանը, որի կազմում էր նաև Դեսպանական ատյանի պաշտոնյա, հայազգի վասիլի Դաուդով Ալամարցյանը: Հեղինակները հայտնում են իրենց Թուրքահայատակ ազդակիցներին, որ ռուսական արքունիքը, Ալեքսեյ Միխայլովիչ ցարը և նրա կանցլեր Աֆանասի Լավրենտիևիչ Օրդին-Նաշուկինը շատ բան են արել հայերի համար, տվել ևն արտոնյալ պայմաններով առևտուր անելու իրավունք և էլի ինչ-որ խոստումներ, որոնց մասին նամակում չէին գրում, բայց հանձնարարում են Վասիլի Դաուդովին՝ հաղորդել անձամբ: Կասկած չունենք, որ նամակագիր-նկրի հանձնարարականը շոշափել է հայ-ռուսական առևտրություններին վերաբերող քաղաքական խնդիրներ, որոնց մասին Դեղինակները խելամիտ են համարել իրենց ազդակիցներին իրազեկել բանավոր՝ կոնսպիրատիվ նպատակներից լցնելով:

Նամակն ուղագրավ է նաև նրանով, որ այն ստորագրող 40 հայերը նեոկայացնում էին ոչ միայն շուղայեցիներին, այլ նաև ինը այլ քաղաքների վաճառականությանը: Ուրեմն, ապացուցվում է այն ենթադրությունը, որ Ռուսաստանի հետ պայմանագիրը կնքված է ոչ թե միայն Ջուղայի, այլև Թիֆլիսի, Երևանի, Ագուլիսի, Շամախիի, այսինքն՝ Անդրկովկասի բոլոր վաճառականների կողմից, և նրանց անունից էլ գրված էր սույն նամակը: Հասկանալի է դառնում այն, որ ռուսական կառավարության տված արտոնությունները տարածվում էին ինչպես իրանի ու Անդրկովկասի վաճառականության, այնպես և հայ այլ զանգվածների վրա:

1667 թ. առևտրական պայմանագիր կնքողների և սույն նամակը ստորագրողների մեջ կային նաև այլ կարգի մարդիկ, որոնք հանդես էին գալիս որպես Հայկական ընկերության ներկայացուցիչներ, թեպետ իրենք վաճառականներ չէին: Մեծահարուստ խոջա Ստեփան Ռամադամսկու և նշանավոր դիվանագետ Գրիգոր Լուսիկովի (Լուսիկենցի) ստորագրությունների կողքին տեսնում ենք մեծատաղանդ նկարիչ Բոգդան Սալթանովի, մետաքսագործ վարպետ Հայրապետ Մարտինովի և այլոց ստորագրությունները: Նամակի հեղինակ-ստորագրողների անվանացանկը գիտական շրջանառության մեջ է մտցնում բազմաթիվ անուններ, ճշգրտում մեր պատկերացումները Ռուսաստան եկող հայ մարդկանց զանազան քնակավայրերի մասին, հնարավորություն ընձեռում ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու 1667—1672 թթ. կնքված հայ-ռուսական պայմանագրի ինչպես տնտեսական, այնպես և քաղաքական նպատակներն ու պատմական նշանակությունը:

40 հայերի անունից արքունիքին դիմումներ անելիս հաճախ ստորագրում էին երկու կամ մի քանի ներկայացուցիչներ: Այսպես, խնդրո առարկա նամակը ստորագրել էին Գրիգոր Լուսիկովը, Ստեփան Ռամադամսկին, Սաֆար Նազարովը, Բոգդան Սալթանովը, Բարկա Տուռուսովը և այլք: Ստեփան Ռամադամսկին և Գրիգոր Լուսիկովը ստորագրում էին հայերեն՝ «Չալաբիթնիս ես, Ստեփանոսըս շուղայեցի Ըռամայդանեցի Մուշեղի որդի ձեռս գրի, ինձ դաբով այժ» և «...ես Գրիգորըս շուղայեցի Լուսիկենց Մարուքէի որդի ձեռ գրի, ինձ դաբով այժ»:

Քննարկվող նամակը լիովին հաստատում է Ռուսաստանի հետ հայերի ոչ միայն տնտեսական կապերը, այլև ազատագրական շարժման ռուսական կողմ-

³ Центральный государственный архив древних актов (далее—ЦГАДА), ф. 100, д. 1666, № 1—4, л. 15.

նորոշման սկզբնավորումը, որ ծիլեր էր տարածում արդեն նաև Կոստանդնուպոլսում: Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում այդ նամակի կարևոր հատվածը:

«И понеже Василе Даудова мы поручены, чтобы веры вам нять ему, потому что ево Василевои работы на нас и на наших армян много, и вы пожалуйста нс которых государств подлинныя весгьев даете о войне и о мире нии или иные какие всти, и сверх того что он, Василий, у вас о каких вестях спрашивать учнет, которые вести годны великому государю, истинно правду про всякие вести проведаячи и писать вам к нему—Василью армянским языком //л. 71// и отдать ему, чтобы ему, Василью то письмо к великому государю к Москве привести.

И вы себе разумеите, разных языков писано и солгано и здесь ложное и затейливое письмо узнают и хотят нашу армянскую подлинную правду ведать. А что станете писать подлинную правду благодетивому великому христианскому царю и любя Христа и сверх того милость великого московского христианского царя до нас—армян неизреченная, пожаловал великий государь жалованные грамоты за своими великого государя красными большими печатями. А что таковой области все армянья купецкие люди, что сырец шелк и всякие товары возить в русскую землю волною дорогою и вольныя торгом всякие товары продавать без убытков, кому хотят—тому продают. И сверх сего дело, спрашивайте у Василия и Василей про то дело скажет его великого государя неизреченную милость. И великого государя милость до армян неизреченная. Тому десятый год, как мы про сие дело по компанееву велению бьем челом великому государю и добиваемся. И ныне по большой милости и великого государя неизреченному призрению и по умыслению его государева и милостивого боярина Афонася Лаврентьевича Ардина-Нащокина то дело ево великого государя милостию и боярским радением зделалось.

И вас, хто и ведает по сей нашей радостной грамоте, молебни бы вам петь в церквах и за великого государя многолетное здоровье бога молить, и за ево боярское радение, чтобы вам бога миломть же. И буде хотите ведать каких нрав от бога дан боярину—как в Венеции дульфиня, которых вы видели и ведаете...»⁴ (подчеркнуто нами—В. В.)

ПИСЬМО ВОСТОЧНЫХ АРМЯН 1667 г.
 КОНСТАНТИНОПОЛЬСКИМ АРМЯНАМ
 ВАЗГЕН ВОСКАНЯН

Резюме

Письмо сорока представителей Армянской торговой компании Ирана уведомляет армян Константинополя о заключении с Россией в 1667 г. торгового договора, по которому (и по жалованной грамоте царя) армянам предоставлялось право привилегированной транзитной торговли через Россию со странами Европы. Авторы письма—крупный купец С. Рамадамский, дипломат Г. Лусиков, живописец Оружейной палаты Кремля Богдан Салтанов и др.—сообщают, что их послание везет Василий Даудов, который много делает для армянского народа, и что он расскажет о заключении договора и еще «сверх сего дела» нечто важное. В письме акцентируется благосклонность к армянам со стороны русского правительства и особенно руководителя Посольского приказа А. Л. Ордика-Нащекина.

⁴ ЦГАДА, ф. 100, д. 1666 г., № 1, л. 69—73.